ԴՈՒՌԸ և ՈՒՂԻՆ

Քահանայության ծեսերն ու ուխտերը մեզ դնում են հավերժական կյանք տանող ուղու վրա և օրհնում ուժով, որի կարիքն ունենք այժմ։

Ենք բոլորս ձգտում ենք հավերժական կյանքին, որը նշանակում է փրկվել և համբարձվել սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում, որտեղ կարող ենք ընտանիքներով ապրել Երկնային Հոր ներկայության մեջ։

Ի լրումն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի և ապաշխարության, քահանայության ծեսերն ու ուխտերը հնարավորություն են տալիս ոտք դնել դեպի հավերժական կյանք տանող ուղու վրա։ Կարևոր չէ, թե երբ եք սկսել այդ ուղին կամ որ մասում եք գտնվում, ծնվել եք Եկեղեցում, թե հետագայում եք դարձի եկել, ձեր ողջ կյանքում ակտիվ եք եղել, թե վերջերս եք վերադարձել Եկեղեցու ակտիվությանը, դուք կարող եք առաջ գնալ այդ ուղով, եթե կենտրոնանաք ձեր ուխտերի և այն ամենի վրա, ինչ կարող եք անել դրանք ստանալու և պահելու համար։

Եվ կարևոր է իմանալ, որ քահանայության ծեսերն ու ուխտերը լոկ փառահեղ ապագայի խոստում չեն։ Դրանք նաև մեզ ուժ, սփոփանք և աջակցություն են պարգևում, որի կարիքը մենք ունենք այժմ, որպեսզի առաջ գնանք այդ ուղով և արդարակեցության մեջ համբերենք մինչև վերջ։ ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԲՐԱՅԱՆ ԲԻՇՈՓ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

ԸՆԹԱՑԻԿ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սուրբ գրություններ—առաջնորդություն և հրահանգներ՝ տրված որպես Աստծո և Նրա ժողովրդի միջև ուխտի մաս (տես Վևու 84.57)

Աղոթք—«[Վարդապետը] առաջարկում է մեզ «միշտ Իրեն հիշելու» ուխտը և զգուշացնում «միշտ աղոթել», մեր հույսը դնելով միայն Իր՝ մեր միակ ապավենի վրա» (President Henry B. Eyring, First Counselor in the First Presidency, "Always," *Ensign*, Oct. 1999, 9)

Ծառայություն—մեր ուխտերի կատարում՝ ծառայելով Աստծուն և Նրա զավակներին, ներառյալ՝ կոչումներ, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք, ավետարանով կիսվել, լիաժամկետ միսիոներական ծառայություն

Ապաշխարություն—հիշել մեր ուխտերը և մոտենալ Փրկչին, երբ շեղվել ենք, երբեմն ստանալով քահանայության ղեկավարների օգնությունը

«Եկեղեցում քահանայության իշխանության միջոցով կատարվում են սուրբ արարողություններ և ուխտեր, որոնք կապում են **ընտանիքները միասին** և մեզանից յուրաքանչյուրին արժանի դարձնում **վերադառնալ Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի** մոտ՝ սելեստիալ արքայություն։ Այդ արարողությունները խաղաղություն են բերում, քանի որ դրանք ուխտեր են կապում Տիրոջ հետ»։

Երեց Քվենթին Լ. Քուք, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Անձնական խաղաղություն՝ արդարակեցության վարձք», *Լիահոնա*, մայիս 2013, 34։

«Ավետարանի պատվիրանների, արարողությունների և ուխտերի ուղու վրա մնալը **պաշտպանում** և **պատրաստում** է մեզ կատարելու Աստծո գործն այս աշխարհում»։

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Հաստատ կանգնեք սուրբ տեղերում», *Լիահոնա*, մայիս 2013, 49։

«Եթե դուք արժանիորեն մասնակցեք քահանայության արարողություններին, Տերը ձեզ կտա ավելի մեծ **ուժ, խաղաղություն և հավերժական հեռանկար»։**

Երեց Նիլ Լ. Անդերսեն՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Զորություն քահանայությունում», *Լիահոնա*, նոյ. 2013, 95։